Ճապոնական ավանդական երաժշտության միջոցառումներ Հայաստանում

2026թ.-ի հունիսի 13-ից 15-ը դեսպանության մշակութային ծրագրի շրջանակում Հայաստանում անցկացվել է ճապոնական ավանդական երաժշտության միջոցառումների շարք՝ տեղացի հանդիսատեսին ներկայացնելու ճապոնական երաժշտական մշակույթը և խթանելու Ճապոնիայի ու Հայաստանի միջև մշակութային փոխանակումը։

Հունիսի 13-ին Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի է ունեցել «Ճապոնիայից Հայաստան» խորագրով ճապոնական ավանդական երաժշտության համերգ։ Ծրագրում հանդես են եկել ճապոնացի երաժիշտներ, այդ թվում՝ պարոն Ջումպեյ Օցուկան՝ շո գործիքով, որը գագակուի գործիք է և համարվում է Ճապոնիայի հնագույն ավանդական երաժշտական գործիքներից մեկը, պարոն Կոկի Նակամուրան՝ ցուգարու շամիսենով, ինչպես նաև պարուհի տիկին Յոշիկա Սավաիրին՝ ճապոնական ավանդական պարով, և պարոն Տակահիրո Ակիբան՝ դաշնամուրով։

Համերգի կարևորագույն պահերից մեկը ճապոնացի և հայ երաժիշտների համատեղ ելույթն էր։ Հայկական մեղեդիները հնչեցին ճապոնական գործիքներով՝ հայկական ավանդական գործիքների՝ դուդուկի ու քանոնի ուղեկցությամբ՝ ներկայացնելով երկու երկրների երաժշտական ավանդույթները մեկ ընդհանուր ծրագրում։ Համատեղ ծրագրում ընդգրկված էին «Հոյ Նազան», «Նազանի և Բրոյի», «Ալագյազ և Խնկի ծառ» սիրված հայկական մեղեդիները, ինչպես նաև «Արքայադուստր Մոնոնոկե» անիմեից հայտնի սաունդթրեքը։

Համերգին ներկա էր շուրջ 450 հանդիսատես։

Հունիսի 14-ին Հիկարի կենտրոնում անցկացվեց ավելի փոքր համերգ, որը հնարավորություն ընձեռեց երեխաներին, երիտասարդներին և այլոց ծանոթանալ ճապոնական ավանդական երաժշտությանը։

Հունիսի 15-ին Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջում կազմակերպվեց ճապոնական ավանդական երաժշտությանը նվիրված դասախոսություն-համերգ։ Ուսանողները ծանոթացան ճապոնական երաժշտական գործիքներին, դրանց պատմությանն ու առանձնահատկություններին, ինչպես նաև հնարավորություն ունեցան ինքնուրույն նվագելու փորձեր կատարել։

Միջոցառումները հայ հանդիսատեսին ճապոնական ավանդական երաժշտությունը ճանաչելու հնարավորություն ընձեռեցին և նպաստեցին Ճապոնիայի ու Հայաստանի միջև մշակութային փոխանակմանն ու փոխըմբռնմանը։



Շո երաժշտական գործիքի կատարում՝ պարոն Օցուկայի կողմից

Ավանդական ճապոնական պար՝ տիկին Սավաիրիի կատարմամբ

Ցուգարու շամիսենի կատարում՝ պարոն Նակամուրայի կողմից

Դաշնամուրային կատարում՝ պարոն Ակիբայի կողմից

Ճապոնա-հայկական երաժշտական համագործակցություն

Հանդիսատեսը՝ Կոմիտասի կամերային երաժշտության տանը

Դեսպան Առկի Յուտական և տիկին Առկին ողջունում են հյուրերին

Խմբակային լուսանկար՝ Կոմիտասի կամերային երաժշտության տանը

Ճապոնական երաժշտության միջոցառում «Հիկարի» կենտրոնում

Ճապոնական երաժշտության միջոցառում «Հիկարի» կենտրոնում

Դասախոսություն-համերգ՝ Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջում

Խմբակային լուսանկար Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի ուսանողների և դասախոսների հետ